ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐ

12-րդ դասարան

Սիրելի՛ աշակերտ, օլիմպիադայի հարցաշարը միտված է բացահայտելու յուրաքանչյուրիդ ստեղծագործական կարողությունները և ինքնուրույն վերլուծական ունակությունները: Գրականության կախարդական աշխարհում բացահայտի՛ր քո աշխարհը: Եղի՛ր ազատ, անկաշկանդ. մտքերդ ձևակերպի՛ր կապակցված, հստակ և հասկանալի:

Հաջողությո՛ւն և հաղթանակ:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աբազյան

1.Ո՞վ է Նաիրի Զարյանը: Ինչու՞ գրեց «Զրույց մեռած բանաստեղծի հետ», « Ասք ի խորոց սրտի », «Ինչու՞» գործերը: (4 մ)

2.Շիրազի հայրենապաշտությունը «Ո՞րն է բաբո»-ից մինչև Արարատ: Գրի՛ր սեփական նկատառումներդ՝ դիմելով Շիրազին: (3մ)

3.Ովքե՞ր են մեր գրականության մեծագույն բնապաշտները. Ի՞նչ է բնապաշտությունը:
Ո՞վ է այս բանաստեղծությունների հեղինակը: «Չես ասի ոչ մի բառով», «Քո խոնարհ ջրկիրն եմ եղել», «Հրաշք լիներ», «Դու իմ կյանքն էիր», «Առաջին սեր»: Ի՞նչ ընդհանրություն ունեն այս բանաստեղծությունները:
Գրիր՛ որևէ մեկը և վերլուծիր՛: (3 մ)

4.Ո՞վ է հեղինակը . «Դառնամ փառաբանեմ… փառաբանեմ մարդուն»: Ո՞ր մարդուն է փառաբանում հեղինակը: Ի՞նչ ընդհանրություն ունի Նարեկացու հետ: (4 մ)

5.Ի՞նչ մտորումներ ունի մեծանուն հայուհին իր ճանապարհի կեսին:
Համեմատի՛ր «Մտորումներ ճանապարհի կեսին» պոեմը «Քելե , լառ» բանաստեղծությանն հետ: (3 մ)

6.Սարոյանը՝ մեծ հայը:
Խոսի՛ր նրա հետ, մեծարիր՛ և գնահատի՛ր :
«Հայը և հայը», «Հայն ու աշխարհը», «Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը», «Իմ անունը Արամ է», «Իմ սիրտը լեռներում է» և այլն: (3 մ)